ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է «ՀրազՋԷԿ» ԲԲԸ Գնումների գնահատող հանձնաժողովի 2019թվականի մայիսի 14-ի N08/14.05.19 արձանագրությանը համապատասխան որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշման դրույթների կիրառմամբ

Գնանշման հարցման ծածկագիրը՝ ՀՋ-ԳՀ-ԱՊՁԲ/ԳազԲ-08/14.05.19-ԱՄ

Պատվիրատուն՝ «ՀրազՋԷԿ» ԲԲԸ, որը գտնվում է ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, հայտարարում է գնանշման հարցում, որն իրականացվում է մեկ փուլով:

Գնանշման հարցման ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **15 հատ գազաբալոնի գնման, դրանց տեղադրումով, փորձարկումով** (տեղադրվելու են 3հատ ՊԱԶ 32054 մակնիշի ավտոբուսների վրա, յուրաքանչյուրում՝ 5-ական բալոն) պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Մատակարարման ժամկետ է սահմանվում պայմանագիրը կնքելուց հետո **20 (քսան) օրացուցային օր:**

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն գնանշման հարցմանը մասնակցելու հավասար իրավունք:

Ընտրված մասնակիցը որոշվում է հրավերի պահանջներին բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Գնանշման հարցման հրավերը թղթային ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ 7-րդ օրացուցային օրը՝ 2019թ մայիսի 22-ին ժամը $13^{30}$-ին: Ընդ որում, թղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Գնանշման հարցման հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «ՀրազՋԷԿ»ԲԲԸ, ք. Հրազդան, Գործարանային-1 հասցեով կամ Էլ. փոստ info@raztes.am:

Հայտերի բացումը տեղի կունենա «ՀրազՋԷԿ,» ԲԲԸ ք.Հրազդան, Գործարանային-1 հասցեում, 2019թ մայիսի 22-ին ժամը $14^{00}$-ին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մնացականյանին, հեռախոս՝ +374 93 93 22 33:

Պատվիրատու՝ «Հրազդանի Էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» ԲԲԸ: